

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՀԵՏ ԶԿԱՊՎԱԾ ՊԱՏԻԺՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

ԶԵԼԻՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ԵՐԵՄՅԱՆ

Սովետական իրավաբանական գրականության մեջ քրեական պատժի արդյունավետությունն պրոբլեմին վերաբերվող բազմաթիվ պարզաբանումներ են տրվում, ոոսնցում իրավաբանները հանգում են այն եզրակացության, որ քրեական պատժի արդյունավետությունը օրենսդրի կողմից դատարանի միջոցով նշանակվող պատժի առջև դրված խնդիրների իրագործումն է: Սա միանգամայն ճիշտ է արտահայտում պատժի առդյունավետություն հասկացությունը և բխում է ՍՍՀ Միության և միութենական հանրապետությունների քրեական օրենսդրության Հիմունքների 20-րդ հոդվածի (ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդված) բովանդակությունից, որտեղ ասված է. «Պատիժը ոչ միայն մեղքի քավումն է կատարված հանցագործության համար, այլև նպատակ ունի դատապարտվածներին ուղղել և վերադաստիարակել աշխատանքին ազնվորեն վերաբերվելու, օրենքները ճշտորեն կատարելու, սոցիալիստական համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև կանխել նոր հանցագործությունների կատարումը ինչպես դատապարտվածների, այնպես էլ այլ անձանց կողմից»:

Պատժի արդյունավետության հարցի վերջնական լուծման համար անհամեմատ կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե ինչպես է ընտրված քրեական պատիժը կոնկրետ հանցագործություն կատարած անձի նկատմամբ, ինչպես է պատիժն անհատականացված՝ ելնելով այդ անձի և նրա արարքի հասարակական վտանգավորության աստիճանից: Միանգամայն ճիշտ է նշում պրոֆ. Ա. Գերցենզոնը, թե այն բոլոր շարժառիթները, որոնք ծնում են առանձին հանցագործություն, մշտապես առանձնահատուկ են, հետևաբար, այդ բոլոր պատճառների բացահայտման և կանխման համար պետք է ունենալ անհատական մոտեցում¹: Այս ամենը բխում է պատժի անհատականության սկզբունքից, որը և սովետական քրեական իրավունքի կարևորագույն սկզբունքներից մեկն է:

ՍՄԿԿ Ծրագրում ասված է. «Սոցիալիզմի պայմաններում աշխատանքային ուղուց շեղված յուրաքանչյուր մարդ կարող է վերադառնալ օգտակար գործունեության»²: Այստեղից հետևում է, որ մեզ մոտ չկան բնածին, հավիտյան անուղղելի անձինք, և եթե նրանք շեղվել են ազնիվ ճանապարհից ու ընկել հանցագործության գիրկը, դատարանի նշանակած արդարացի, օբյեկտիվ պատիժը կրելուց հետո կարող են ուղղվել, վերադաստիարակվել և դառնալ մեր հասարակությանը արժանի քաղաքացիներ:

Պատժի անհատականացման սկզբունքը, որն իր արտահայտությունն է գտել ՍՍՀ Միության և միութենական հանրապետությունների քրեական օրենս-

¹ А. А. Герцензон, Введение в советскую криминологию, М., 1965, стр. 127.

² «ՍՄԿԿ Ծրագիրը և կանոնադրությունը», Երևան, 1961, էջ 129:

դրույթյան Հիմունքների 32-րդ հոդվածում (ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդված), իրականացվում է դատարանի կողմից՝ յուրաքանչյուր առանձին դեպքում ճիշտ, նպատակահարմար և արդարացի պատիժ նշանակելով յուրաքանչյուր անձի նկատմամբ, որը մեղավոր է ճանաչվում կատարած հանցագործության համար, և դատարանը քրեական օրենքի հատուկ մասի համապատասխան հոդվածով սահմանված պատժի շրջանակներում նշանակում է քրեական պատիժ՝ ղեկավարվելով օրենքի պահանջներով ու իր սոցիալիստական իրավագիտակցությամբ:

Յուրաքանչյուր պատիժ, որը կիրառվում է հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի նկատմամբ, ոչ միայն պետք է բավարարի քրեական պատժի ընդհանուր և հատուկ նախազգուշացման խնդիրներին, այլև չպետք է պատճառի լրացուցիչ տանջանքներ և իր մեղմությամբ չպետք է կրի ձևական բնույթ:

Մ. Ի. Կալինինը, 1924 թ. մարտի 10-ին, սովետական արդարադատության գործիչների V համագումարում նշել է, որ դատավորը չպետք է ասի՝ եթե այս անձնավորությունը մեղավոր է, պետք է նրան պատժել, այլ նա պետք է ասի՝ արձակել դատավճիռ, որը հնարավորության սահմաններում կտա բացարձակ արդյունք: Եվ եթե այդ արդյունքը ստացվում է մեղմ պատժի նշանակությամբ, ապա պետք է արձակել մեղմ պատիժ, իսկ եթե այն կստացվի խիստ պատժից, անհրաժեշտ է արձակել խիստ պատիժ³:

Պատիժը կհասնի օրենքի կողմից նշված նպատակների իրականացմանը միայն այն դեպքում, եթե համապատասխանում է կատարված հանցագործության բնույթին ու վտանգավորության աստիճանին, ինչպես նաև՝ հանցավորի անձնավորությանը: Պատժի ճիշտ համապատասխանությունը կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանին հնարավորություն է տալիս հասնելու պատժի ընդհանուր նախազգուշական կողմի իրականացմանը: Դատարանի արձակած դատավճիռը այլ անձանց պետք է զգացնել տա օրենքի անադարտությունն ու օբյեկտիվությունը:

Նշանակված պատժի տեսակը և չափը, հանցավորի անձնավորության և նրա կատարած արարքի վտանգավորության համապատասխանությունը կարևոր նշանակություն ունեն պատժի հատուկ նախազգուշական կողմի արդյունավետ իրականացման համար: Այդ պատճառով էլ հանցագործություն կատարած յուրաքանչյուր անձ պետք է ստանա իր կատարած արարքի հասարակական վտանգավորության աստիճանին և իր անձնավորությանը համապատասխան ու արժանի պատիժ: Հարկ է նշել, որ հանցագործություն կատարած անձի նկատմամբ ճիշտ ու նպատակահարմար պատիժ նշանակելիս կբարձրանա դատաքննչական մարմինների հեղինակությունը և, ընդհակառակը, ոչ ճիշտ նշանակված պատիժը կդիտվի որպես օրինականության խախտում և, բնականաբար, չի կարողանա հասնել քրեական պատժի առջև դրված նախազգուշական խնդիրների իրականացմանը:

Պատժի անհատականացման սկզբունքն ամբողջությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև ժանրացուցիչ ու մեղմացուցիչ հանգամանքները, որոնք այս կամ այն չափով առնչվում են մեղավոր անձի և հանրության համար վտանգավոր նրա արարքի հետ:

³ М. И. Калинин, О социалистической законности, М., 1959, стр. 89.

⁴ Այդ մասին մանրամասն տես Մ. И. Карпец, Индивидуализация наказания в советском уголовном праве, М., 1961, стр. 9—10.

Պատժի անհատականացման և նշանակման ժամանակ կարևոր դեր կարող է խաղալ նաև հանցակազմի առանձին տարրերի մանրակրկիտ ուսումնասիրությունը: Դրա համար էլ օրենքը դատարանից պահանջում է պատիժ նշանակելիս հաշվի առնել բոլոր հանգամանքները, մանրազնին քննել հանցագործությունն ծնող պատճառներն ու դրան նպաստող պայմանները, այն կատարողի անձը, հանցագործության կատարման մեջ նրա ունեցած դերը, անմիջական շարժառիթները, հանցագործության պատճառով առաջացած հանրության համար վտանգավոր հետևանքների աստիճանը, հանցագործության վայրը, ժամանակը, իրադրությունը և այլն: Իրավախախտ անձնավորության նման ուսումնասիրությունը հնարավորություն կտա ճանաչելու նրան մինչև հանցագործություն կատարելը, իմանալու հասարակության մեջ դրսևորած վարքը, աշխատանքային կոլեկտիվի անդամների հետ վարվելակերպը, աշխատանքի նկատմամբ նրա վերաբերմունքը, ինչպես նաև կնպաստի հանցագործության պատճառների ու սլայմանների բացահայտմանը, հետևաբար, այդ բոլորի հիման վրա՝ նաև ճիշտ պատիժ նշանակելուն: Այս ամենը մանրամասն քննելուց հետո միայն դատարանը պետք է նշանակի համապատասխան պատիժ:

Քրեական օրենքը միշտ ձգտում է, օրենքի շրջանակներին համապատասխան, ստեղծել միասնական դատական քաղաքականություն, քաղաքացիների իրավունքների պաշտպանում և նույն հանցագործությունների կատարման դեպքերում համաչափ պատժի նշանակում, որով և իրականացվում է օրինականության միասնականության սկզբունքը: Բայց, այնուամենայնիվ, դատարանը բավական լայն հնարավորություններ ունի հանցագործություն կատարած անձի նկատմամբ պատիժ նշանակելու, հաշվի առնելով գործի կոնկրետ առանձնահատկությունները, եթե, իհարկե, այդ ամենը համապատասխանում են օրենքի ոգուն: Պատահական չէ, որ ՍՍՀՄ Գերագույն դատարանը միշտ անդրադառնում է այդ հարցին և իր որոշումներով ու պարզաբանումներով ցուցումներ տալիս ստորադաս դատական մարմիններին՝ ամեն անգամ պատժի հարցը լուծելիս հաշվի առնել արարքի վտանգավորության աստիճանը, կատարողի անձը և մնացած հանգամանքները⁵:

Մենք ժողովրդական դատարաններում կատարել ենք քրեական գործերի ուսումնասիրություն՝ պատժի անհատականացման և նշանակման հարցերի վերաբերյալ հատկապես այնպիսի հանցագործությունների գործերով, որոնց կատարողների նկատմամբ օրենքը նախատեսում է կիրառել ազատազրկում և ազատազրկման հետ չկապված պատիժներ: Ժողովրդական դատարանի նշանակած քրեական պատիժը հանցագործություն կատարած անձի նկատմամբ ընդհանրապես պետք է կրի անհատական բնույթ, ելնի տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, արարքի հասարակական վտանգավորության աստիճանից: Սակայն համապատասխան պատժատեսակ և պատժաչափ նշանակելիս միշտ չէ, որ հաշվի են առնվում հանցավորին բնորոշող բոլոր տվյալները, գործի բոլոր ծանրացուցիչ և մեղմացուցիչ հանգամանքները: Այսպես, օրինակ, դա-

⁵ Постановление пленума Верховного Суда СССР от 31 июля 1962 г. № 12 «О некоторых недостатках в практике применения судами мер уголовного наказания» («Сборник постановлений пленума Верховного Суда СССР 1924—1963», М., 1964, стр. 157) и др.

տավճուի նկարագրական մասում չեն նշվում այն պայմաններն ու պատճառները, որոնք հիմք են տվել դատարանին նշանակելու այդպիսի պատիժ:

Պատժի նշանակման ժամանակ դատարանն, անհատականացնելով պատժատեսակը կոնկրետ անձի նկատմամբ, վերջնականապես պետք է բացահայտի, թե հնարավոր չէ՞, արդյոք, նշանակել ազատազրկման հետ չկապված պատիժ (հասարակական պարսավանք, տուգանք, ուղղիչ աշխատանքներ և այլն), քանի որ, ինչպես ցույց են տալիս միութենական հանրապետությունների քրեական օրենսդրությունների ուսումնասիրությունները, շատ թվով հոգվածներ երկրնտրանքով են որոշում կոնկրետ հանցագործության համար կիրառվող պատժատեսակը: Օրինակ՝ հոգվածի սանկցիայում թույլատրվում է նշանակել և՛ ազատազրկում, և՛ ազատազրկման հետ չկապված պատիժներ:

Ինչպես հայտնի է, քրեական օրենսգրքերում կան այնպիսի հանցագործություններ, որոնց կատարողների նկատմամբ կարող են կիրառվել կամ քրեական պատիժներ, կամ հասարակական ներգործության միջոցներ (Քրեական օրենսգրքի 47 և 48 հոդվածները): Եթե հնարավոր է հանցագործություն կատարած անձին ուղղել և վերադաստիարակել առանց որևէ քրեական պատժի, ապա դատարանը հենց այդպես էլ պետք է վարվի՝ կիրառելով դաստիարակչական բնույթի այլ միջոցներ, քանի որ դատարանը չպետք է ձգտի մեղմ կամ խիստ պատիժ նշանակելուն, այլ պետք է գտնի, թե ինչպիսի՞ ներգործության միջոցների կիրառմամբ կկարողանա հասնել հանցագործություն կատարած անձի ուղղմանն ու վերադաստիարակմանը, պատժի ընդհանուր և հատուկ նախազգուշական կողմերի իրականացմանը:

Այսպիսի պայմաններում է, որ ավելի ցայտուն են դրսևորվում սովետական քրեական օրենսդրության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ անհատականացման սկզբունքի դերն ու նշանակությունը, այն, որ յուրաքանչյուր հանցագործության դեպք և յուրաքանչյուր հանցավոր անձ անհատական են, և նրանց նկատմամբ պետք է ունենալ անհատական մոտեցում: Պատժատեսակ և պատժաշափ ընտրելիս, օրենսդրի կողմից քրեական պատժի առջև դրված խնդիրների բարեհաջող իրականացման համար, անհրաժեշտ է հիմնավորել ու նշանակել ամենանպատակահամար պատիժը: Իսկ պատիժների անհատականացման սկզբունքի ճիշտ լուծման նպատակով պետք է կիրառել հետևյալ մոտեցումը. եթե անձը կատարել է հանցագործություն և դատապարտվել է ազատազրկման հետ չկապվող պատժով, ապա երկրորդ անգամ նման կամ ավելի ծանր հանցագործություն կատարելիս նրա նկատմամբ չպետք է նշանակել նույն կամ մի ավելի մեղմ պատժատեսակը: Նույն պատժատեսակը կարող է նշանակվել միայն այն դեպքում, եթե ընտրվի տվյալ պատժի ավելի ներգործուն չափը: Այսպես, ՀՍՄՀ՝ քրեական օրենսգրքը նախատեսում է պատասխանատվություն զրպարտության և վիրավորանքի համար (131 և 132 հոդվածներ և միութենական հանրապետությունների քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներ): Ինչպես նկատվում է այդ հոդվածների սանկցիաների վերլուծությունից, եթե զրպարտությունը կատարվել է առաջին անգամ, ապա այլ պատիժների հետ միասին հանցավոր անձի նկատմամբ կարող են նշանակվել ուղղիչ աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով: Նույն հոդվածների (ՀՍՄՀ քրեական օրենսգրքի 131 և 132 հոդվածներ) Ձ-րդ մասերում նշված է, որ եթե զրպարտություն և վիրավորանք է հասցվում կրկին ան-

դամ կամ այլ եղանակների գործադրմամբ, ապա, այլ պատիժներից բացի, կարող են կիրառվել նաև մինչև մեկ տարի ժամանակով ուղղիչ աշխատանքներ:

Եթե առաջին անգամ հանցագործություն կատարողի նկատմամբ նշանակվել են, օրինակ, ուղղիչ աշխատանքներ, ապա կրկին նույն հանցագործությունը կատարած անձի նկատմամբ ներգործության նույն տարրերի առկայության պայմաններում աննպատակահարմար է նշանակել նույն պատիժը: Կամ՝ եթե առաջին անգամ վիրավորանք հասցրած անձը պատժվել է հիսուսու ռուբլի տուգանքով, ապա աննպատակահարմար է երկրորդ անգամ նույն արարքը կատարողի նկատմամբ կիրառել նշված տուգանքը: Իսկ եթե երկրորդ անգամ կատարած հանցանքի համար դատարանը նպատակահարմար կգտնի նորից նշանակել տուգանք, ապա այս դեպքում տուգանքի չափը պետք է ավելացվի:

Այն կարծիքին չենք, որ երկրորդ անգամ հանցանք կատարած անձի նկատմամբ չի կարելի ազատագրկման հետ չկապված պատիժ նշանակել կամ նշանակել ազատագրկման հետ չկապված այնպիսի պատիժ, որը ներգործուն շատ տարրեր ունի: Երբ տվյալ անձը երկրորդ անգամ է կատարում նույնանման հանցագործություն, դատարանը պետք է ընտրի ավելի խիստ պատժատեսակ, այն հիմնավորվածությամբ, որ առաջին անգամ նշանակված պատիժը չի ներգործել տվյալ անձի վրա, հետևաբար և չի հասել իր նպատակի իրականացմանը՝ հանցավորի ուղղմանն ու վերադաստիարակմանը: Եթե առաջին անգամ նշանակված պատիժը արդյունավետ չի եղել տվյալ անձի նկատմամբ և չի հասել իր նպատակներին (մեր օրինակում պատժի հատուկ նախազգուշացմանը), ապա դատարանը նույն անձի կատարած նմանօրինակ արարքի համար պետք է ընտրի ավելի ներգործուն պատժատեսակ ու պատժաչափ: Դա պետք է կատարվի այն նկատառումով, որ հանցագործը զգա առաջին անգամ կատարածի համար մեղմ պատժվելը, և եթե համապատասխան հետևությունների չի հանգել, ուրեմն երկրորդ անգամ պետք է խիստ պատժվի:

Թեև ՀՍՄՀ քրեական օրենսգրքի 131 և 132 հոդվածների երկրորդ մասերում էլ նախատեսվել է ուղղիչ աշխատանքների կիրառում նույն ժամկետներով, բայց նման հանգամանքը պետք է հասկանալ այսպես՝ եթե առաջին անգամ նշանակվում են ուղղիչ աշխատանքներ որոշակի ժամկետով և որպես պետական եկամուտ պահվող գումարի չափով, ապա երկրորդ անգամ նշանակվող ուղղիչ աշխատանքները պետք է պարունակեն ավելի ներգործուն տարրեր, և կամ դատապարտյալը ուղղիչ աշխատանքները պետք է կրի ոչ թե իր աշխատանքի վայրում, այլ տնօրինող մարմինների նշանակմամբ, թեկուզև նույն ժամկետով և որպես պետական եկամուտ պահվող գումարի նույն չափով, ինչ որ նշանակվել էր առաջին անգամ կատարածի համար: Պետք է ասել, որ այս վերջին տեսակի ուղղիչ աշխատանքներն ավելի ներգործուն և արդյունավետ են իրենց առջև դրված նպատակների իրագործման առումով, հատկապես այն անձանց նկատմամբ, որոնք հանցավոր արարքներ կատարել են երկրորդ անգամ, իհարկե, եթե երկրորդ անգամ կատարածի համար օրենքը նախատեսել է ուղղիչ աշխատանքների կիրառում:

Այս առումով չենք կարող համաձայնվել այն հետադոտողների հետ, որոնք առաջարկում են քրեական օրենսգրքերից ընդհանրապես վերացնել տնօրինող մարմինների հայեցողությամբ ուղղիչ աշխատանքների նշանակումը՝ պատ-

ճառաբանելով, որ դրանց իրագործման ընթացքում առաջանում են որոշակի դժվարություններ⁶:

Ինչպես նշվեց, պատիժը միայն հանցագործություն կատարած անձին ուղղելու և վերադաստիարակելու նպատակ չի հետապնդում, այլ այն մեծ դեր է կատարում նաև հանցագործությունների կանխման գործում այնպիսի անձանց համար, որոնք կարող են դառնալ հանցագործության սուբյեկտներ: Նախագուշակա՛ն խոշոր դեր ունի դատարանի արձակած այն դատավճիռը, որն ամենից առաջ բխում է օրենքից, իսկ եթե դատարանը, հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, նշանակում է տվյալ հոդվածի սանկցիայով նախատեսած մեղմ պատիժ, ապա պետք է հանգամանորեն հիմնավորի այն, որպեսզի ներկաները տպավորություն չստանան, թե, օրինակ, բավական մեծ գումարի արդյունաբերական ապրանքների սպեկուլյացիա կատարած հանցագործը դատապարտվեց միայն տուգանքի: Հետևաբար, հատկապես ազատազրկման հետ չկապված պատիժների նշանակման ժամանակ արձակած դատավճիռները հիմնավորելու գործում դատավորների պատասխանատվությունն ավելի է բարձրանում:

Քրեական գործերի ուսումնասիրության ընթացքում նկատվեցին նաև իրավապաշտպան մարմինների գործունեության մեջ գոյություն ունեցող այլ թերություններ: Այսպես՝ դատաքննչական մարմինները ձեռք չեն բերում մեղադրյալի մասին եղած բոլոր դրական և բացասական տվյալները: Հազվադեպ է գործին կցված լինում մեղադրյալի աշխատանքային բնութագրերը, որը առկայության դեպքում էլ երբեմն կրում է ձևական բնույթ, իսկ բնակության վայրից, հասարակական կազմակերպություններից բնութագրեր գրեթե բացակայում են:

Քրեական գործերի ուսումնասիրությամբ բացահայտված է, որ խուլիզանության դեպքերի բացարձակ մեծամասնությունը կատարվում է հարբած վիճակում, որը պատիժը խստացնող հանգամանք է: Սակայն այդ մասին եղած տվյալները մեր ուսումնասիրած գործերում բացառություններ են: Գործերում տվյալներ չկան նաև աշխատավարձի կամ անձնական եկամտի չափի մասին, որոնք հնարավորություն կտան դատարանին ճիշտ կողմնորոշվել տուգանք նշանակելիս: Այս ամենից բացի, դատարանները սխալմամբ նշանակելիս չեն հենվում նաև այն բոլոր տվյալների վրա, որոնք արդեն իսկ կան քրեական գործում:

Պատիժ նշանակելիս դատարանները պարտավոր են հաշվի առնել ծանրացնող և մեղմացնող բոլոր հանգամանքների բնույթը, որոնք, անկասկած, խոշոր նշանակություն կունենան պատժաչափի և պատժատեսակի ընտրելու հարցում: Իսկ եթե դատարանի կողմից հաշվի առնվեն միայն ծանրացնող կամ միայն մեղմացնող հանգամանքները, ապա կնշանակվի արարքի հասարակական վտանգավորության աստիճանին և հանցավորի անձնավորությանը անհամապատասխան պատիժ կամ այնպիսի պատիժ, որը թեև համապատաս-

⁶ А. С. Михлин, В. И. Гуськов, И. А. Кириллова, Ю. Б. Мельникова, В. Т. Михайлов, Эффективность исправительных работ как меры наказания («Эффективность уголовно-правовых мер борьбы с преступностью», М., 1968, стр. 117—119); Ю. Б. Мельникова, Пути повышения эффективности исправительных работ без лишения свободы в развитом социалистическом обществе («Научно-технический прогресс и проблемы уголовного права», М., 1975, стр. 172) и др.

խանում է արարքի վտանգավորության աստիճանին ու հանցավորի անձնավորությանը, բայց, ինչպես նշվեց վերևում, ներկաները չեն ընկալի թե ինչո՞ւ նշանակվեց այս պատժատեսակը և ոչ ուրիշը: Իսկ, մյուս կողմից, դատապարտվող անձը չի կարողանա կռահել այն ամենը, որոնք հիմք տվեցին դատարանին նշանակելու, օրինակ, ազատազրկում և ոչ թե տուգանք կամ ուղղիչ աշխատանքներ, ինչպիսիք կան տվյալ հոգվածի սանկցիայում:

Ամփոփելով վերը շարադրվածը, ասենք, որ քննչական մարմինները պետք է քոցահայտեն, իսկ դատարաններն իրենց հերթին ձեռք բերեն ու հաշվի առնեն այն բոլոր հանգամանքները, որոնք տվյալ գործի համար կարող են ունենալ որոշակի նշանակություն և հնարավորություն կտան օբյեկտիվորեն բնութագրելու ինչպես հանցավորին, այնպես էլ բուն արարքը, հետևաբար և ճիշտ պատիժ նշանակելու: Այս ամենը ավելի արդյունավետ կդարձնեն նշանակված պատիժը և ավելի շուտ կհասցնեն այն խնդիրների իրականացմանը, որոնք օրենսդրի կողմից դրված են քրեական պատժի առջև:

Նշված թերությունների վերացումը և կատարված առաջարկությունների իրագործումը քրեական պատիժների անհատականացման պրոցեսում, մեր կարծիքով, կօգնեն օրինականության է՛լ ավելի ամրապնդմանը և, բնականաբար, ազատազրկման հետ չկապված պատիժների արդյունավետության բարձրացմանը:

ВОПРОСЫ ИНДИВИДУАЛИЗАЦИИ НАКАЗАНИИ, НЕ СВЯЗАННЫХ С ЛИШЕНИЕМ СВОБОДЫ

ЗЕЛИМ ТАДЕВОСЯН, ГЕВОРГ ЕРЕМЯН

Р е з ю м е

При назначении уголовного наказания суд исходит из общих начал назначения наказания. Это положение нашло свое отражение в ст. 32 Основ уголовного законодательства Союза ССР и союзных республик (ст. 34 УК Армянской ССР и соответствующие статьи УК других союзных республик), где говорится, что назначая наказание, суд руководствуется социалистическим правосознанием, учитывает характер и степень общественной опасности совершенного преступления, личность виновного и обстоятельства дела, смягчающие и отягчающие ответственность.

Однако, как показало изучение уголовных дел, в народных судах при назначении наказания не всегда учитывают все обстоятельства дела, смягчающие и отягчающие ответственность, личность виновного, т. е. не всегда достаточно индивидуализируется наказание. Такое положение приводит к назначению необоснованно мягких или суровых наказаний, что в определенной мере сказывается на эффективности наказания в борьбе с преступностью.